ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կիլիկյան Աթոռի օրինապահ միաբանության և ժողովրդի գլուխ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աչապահյանը։

Երևանի քաղաքային կայարանում Նորին Սրբազնությունը դիմավորվեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի կողմից, որը, հանուն Վեհափառ Հայրապետի, բարի գալուստ մաղթեց հարգելի հյուրին։

Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսը, Մայր Տաճարի զանգերի զողանջների ներքո, առաջնորդվեց Մայր Տաճար, իր ուխտը կատարելու և աղոթելու։

Մայր Տաճարում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը ողջունեց Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի ժամանումը։

Նորին Ամենապատվությունը, ջերմ շնորհակալություն հայտնելով սրտագին դիմավորման համար, բարձրացավ Վեհարան, Վեհափառ Հայրապետի օրհնությունն առնելու։

Հուզիչ և սրտառուչ էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի ողջագուրումը։

Խադ սրբազանը Վեհափառ Հայրապետի հյուրն է։

Ամսագրիս խմբագիրը օգոստոս ամսի 30-ին պաշտոնական այցելություն տալով, բարի գալուստ մաղթեց սրբազան հոր, որն իր այցելության առթիվ ասաց.

— Ազգիս Վեհափառ Հայրապետի մասնավոր հրավերով կուգանք մասնակցելու, որպես Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ, հանուն մեր միաբանության և ժողովուրդին, այս սեպտեմբերին գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովին, որուն օրակարգին վրա կան կարևոր հարցեր։

Մեր եկեղեցական և աշխարհիկ պատգամավորները Մայր Աթոռ կժամանեն սեպտեմբերի վերջերուն։

1958 թվականի իմ վերջին այցելությենեն հետո, շատ փոխված կգտնեմ Մայր Աթոռը և սրտանց կուրախանամ։ Ամեն կողմ շինարարություն, կառուցում։

Աստված երկար և քաջառողջ կյանք պարգևե մեր սիրելի Հայրապետինս։

Բարի գալո՞ւստ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսին։